## ՆԵՐՍԻՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ԴՐԱՄԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Ներկայ 1890 թ. փետրուարի 14-ին, Թիֆլիսի Ներսիսեան Դպրոցում, կատարուեց ակտ, որի միջոցին, ի միջի այլոց, կարդացուեց Դպրոցի դրամական հաշիւը։ Այդ դօկումէնտից մենք քաղում ենք հետեւեալ թւերը, որոնք վերաբերում են Դպրոցի մուտք և ելքին 1889 թւականում։

| ՄՈՒՏՔ։ | ռուբլի | կոպ. |
|---|---|---|
| Մնացորդ գումար առ 1-ն յունուարի 1889 թ. | 8.861 | 45 |
| Կապալադրամ կալուածների (մանրամասնութ. տես Ներքև, I) | 28.072 | 35 |
| Ապառիկ կալուածների կապալադրամի | 2.959 | 01 |
| Կապալադրամ մոմավաճառութեան (Թիֆլիսի թեմի) | 9.516 | — |
| Ուխտատեղիների արդիւնքներ (մանրամաս. տես Ներքև, II) | 5.335 | 89 |
| Ապառիկ ուխտատեղիներից | 32 | 52 |
| Թոշակադրամ թոշակառուների և այլ կտակուած գումարներից (մանրամ. տես Ներքև, IV) | 2.128 | 21 |
| Տոկոսիք ըստ ընթացիկ հաշուի | 111 | 68 |
| Այլ և այլ մանր արդիւնքներ | 805 | 86 |
| | 57.822 | 97 |

| ԾԱԽՔ։ | | |
|---|---|---|
| 24 որդեգիրների սնունդի, հագցնելու և դասական պիտոյքների համար | 3.855 | 53 |
| Ընթերցանութեան գրքերի համար | 181 | 08 |
| Թոշակառուների թոշակադրամ | 294 | — |
| Ռոճիկներ տեսչին, ուսուցիչներին և այլ պաշտօնատար անձերին | 24.434 | 93 |
| Կալուածների շինութեան և նորոգութեան | 3.947 | 86 |
| Ապահովութեան կալուածների և շարժական կայքերի ընդդէմ հրդեհի | 1.430 | 78 |
| Տնահարկ կալուածների | 1.153 | 16 |
| Հոգեհանգիստների կատարման Ներսէս V կաթողիկոսի և բարերարների | 504 | — |
| Ուխտատեղիների շինութեան և նորոգութեան | 111 | 95 |
| Ապահովութեան Թելեթի և Կրծանիսի սենեակների ընդդէմ հրդեհի | 50 | 40 |
| Ուխտատեղիների համար ծախսուած մոմերի գինը և այլ ծախքեր | 2.364 | 07 |
| Մանր ծախքեր | 640 | 58 |

| | րուբ. | կոպ. |
|---|---|---|
| Վառելափայտի ծախք | 557 | 53 |
| Դիւանական պիտոյքներ | 37 | 90 |
| Կահ-կարասիների համար | 232 | 13 |
| Դատաստանական ծախքեր | 2.219 | 65 |
| Օրագրի | 6 | — |
| Դպրոցի խմբապետի և երգեցիկ խմբի օժանդակութիւն ննջեցեալների յուղարկաւորութեան համար | 261 | 30 |
| Անցեալ տարիների ծախքերի ապառիկներ | 285 | 95 |
| Գումարն է... | 42.568 | 80 |
| Մնում է յաջորդ առ 1-ն յունուարի 1890 թ. | 15.254 | 17 |

Բացի դորանից, Դպրոցի հոգաբարձութիւնը ունի մի գումար՝ Դպրոցի ապագայ նոր շինութեանը յատկացնելու նպատակով։ Ցայժմ այդ գումարը հասել է ................ 17.521 32

Այդ գումարի կազմելը սկսուած է 1880 թուից։ Նորա կազմելուն մասնակցել են թէ առանձին նուիրատուներ և թէ Դպրոցը ինքը, որը այդ գումարի մէջ իւր դրամական միջոցներով մասնակցել է 12. 997 ր. 81 կոպ. գումարով։ (Մանրամասնութիւնները տես. Ներքև V)։ Յիշենք, վերջապէս, որ 1882 և 1883 թւականների Դպրոցի հաշիւների մէջ մի շփոթութիւն է պատահած, որից հոգաբարձութեանը թւում է թէ գանձարանին պակասում է մօտաւորապէս 4.000 րուբլի։ Այդ հաշիւները քննելու վերայ պարապած է մի առանձին հաշուագէտ։

Մուտքի մէջ յիշուած աղբիւրների մանրամասնութիւնները հետևեալներն են.

## I. ԿԱԼՒԱԾՆԵՐ.

| | փողային արժէքն րուբ. | կոպ. |
|---|---|---|
| 1) Հին դպրոցի տունը, կառուցած Դպրոցի հիմնադիր Ներսէս V կաթողիկոսից | 6.556 | — |
| 2) Հին Դպրոցի հանդէպ գտնուած 21 կրպակները, սեպհականացրած Դպրոցին Ներսէս V-ից | 6.101 | — |
| 3) 21 կրպակներ, որոնք գտնւում են Դպրոցի հրապարակի վերայ. | 800 | — |
| 4) 21 նորակառոյց կրպակներ, նոյն հրապարակի վերայ (Դոցա գետինը սեպհականացրած է Դպրոցին Մատթէոս կաթողիկոսից, իսկ շինութիւնը արել է հոգաբարձութիւնը. տես ներքև III). | 2.150 | — |
| 5) Այժմեան դպրոցական տունը, որ գնել է հոգաբարձութիւնը 1856 թ. | 1.408 | — |

ռուբ. կոպ.

6) Կալուած, ընծայած Աւետիք Փիլօյեանցից............... 12.320 —
7) Կրպակ, ընծայած Գրիգոր Շէրգիլեանցից............... 200 —
8) Տուն, ընծայած Ստեփան Գուլփաշալեանցից............ 200 —
9) Կրպակ, ընծայած Օթար Շաղբաթեանցից............... 180 —
10) Կալուած, ընծայած Յարութիւն Ջքօյեանցից............ 1.480 —
(Այս կալուածները գտանւում են Թիֆլիս քաղաքի զանազան թաղերում).
11) Այգի, ընծայած վրաց իշխան Օթար Ամիլախւարուց, Սողանլուխում. ................................ 150 —
12) Այգի, ընծայած Ստեփան Ղամբարեանցից, Թէլէթում..... 10 —
13) Կրպակ Թէլէթի ուխտատեղում......................... 260 —

Դպրոցին պատկանում են և հետևեալ տները, որոնք գտանւում են Թիֆլիս քաղաքում.

14) Տուն, ընծայած իշխան Երկայնաբազուկ-Արղութեանից, որի արդիւնքը տակաւին վայելում է հանգուցեալի եղբայրը, համաձայն կտակի՝ ցմահ իւր և որը գնահատուած է հրդեհից ապահովութեան համար................. 19.400 ր.
15) Տուն, ընծայած Յովակիմ Տէր-Աբրահամեանցից, որի արդիւնքը պիտի վայելէ հանգուցեալի այրին ցմահ իւր, համաձայն կտակի. Գնահատուած է ................4.000 ր.

## II. ՈՒԽՏԱՏԵՂԵՐԻ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

Բացի այս կալուածներից, Դպրոցի հիմնադիրը յատկացրել է Դպրոցին զանազան ուխտատեղերի արդիւնքները. Այս ուխտատեղերից մի քանիսը կառավարւում են հոգաբարձութիւնից, իսկ միւսներից նա միայն արդիւնքներն է վայելում.

Այդ ուխտատեղերը հետևեալներն են՝

1) Թէլէթի, 2) Շաւնաբաթի, 3) Ծաղկէվանքի, 4) Կրծանիսի, 5) Կաթուղիկէի, 6) Շւինդիսի, 7) Բօլնիսի, 8) Շամշադինի, 9) Ղազախի, 10) Ելիզաւէտպօլի, 11) Լօռու, 12) Շուլաւէրի, 13) Շամշուլդայի, 14) Սօղանլուխի և 15) Մցխէթի. Դոցա ամենի տարեկան զուտ արդիւնքն է... 3.126 ր.

## III. ՀՐԱՊԱՐԱԿԸ ՎԱՆՔԻ ՄՕՏ

Ի Տէր հանգ. Մատթէոս կաթողիկոսը, համաձայն հոգաբարձութեան խնդրին, որի մէջ յղացել էր Դպրոցի համար նոր շինուածք կառուցանելու միտքը, ընծայեց Դպրոցին այն ընդարձակ հրապարակը, որ գտանւում է վանքի մայր եկեղեցու մօտ. բայց Դպրոցի տան շինութեան խնդիրը այն վէճերի պատճառով, որ բացուեցին այն տեղի վերայ զանազան մանր տներ ունեցողների հետ, մնաց մինչև այժմ անկատար, թէպէտ այդ

*տներից մի քանիսը հոգաբարձութիւնը գնել է զանազան ժամանակներում։ Հոգաբարձութիւնը, տեսնելով որ այդ հրապարակի խպառ մաքրելը այդ տներից երկարում է, որոշեց կառուցանել նորա վերայ կրպակներ, որոնք յիշատակւած են վերև (տես կալւածներ, № 4)։*

## IV. ՆՈՒԻՐԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐ։

*(Կտակներով և ընծայաբերութիւններով, որոնցով գնւած են տոկոսաբեր տոմսեր, պահ տւած Արքունական բանկի Թիֆլիսի բաժնում)։*

| | |
|---|---|
| 1) Էֆենդեանց Յովսէփ, աստիճանաւոր | 64.000 ր. |
| 2) Ռոտինեանց Մարկիանոս, բժշկապետ | 950 — |
| 3) Եղիազարեանց Վարդան, երդւեալ հաւատարմատար | 100 — |
| 4) Տէր-Դաւթեանց Եսայի, Գօրւայ քաղաքացի | 3.845 — |
| 5) Վարդանեանց Սողոմոն, Թիֆլիսեցի | 4.100 — |
| 6) Թիֆլիսի հայ հասարակութիւնը, յանուն Նախկին առաջնորդի, այժմ վեհ. կաթողիկոսի | 4.000 — |
| 7) Սամուէլեանց Մինաս, Ղզլարի ա. կարգի վաճառական | 3.200 — |
| 8) Երուսալիմսկի գնդապետի այրի Վարվարէ | 5.250 — |
| 9) Շաղբաթեանց Օթար, Թիֆլիսի արհեստաւոր | 200 — |
| 10) Աստուածատրեանց Եսայի վարդապետ, Թիֆլիսեցի | 5.600 — |
| 11) Մարկոսեանց Յովհաննէս, բժշկապետ, Թիֆլիսեցի | 700 — |
| 12) Բալանդուրեանց Գէորգ, Թիֆլ. ա. կարգի վաճառական | 1.100 — |
| 13) Շիօշեանց Գրիգոր, Թիֆլ. ա. կարգի վաճառական | 5.000 — |
| 14) Փուղինեանց Մարիայի, այրի Թիֆլիս. քաղաքացու | 850 — |
| 15) Սերեդենկօ Մարիամ, Թիֆլիսեցի հայազգի | 833 — |
| | 99.728 — |

## V. ՇԻՆՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ։

*Յիշեալ 17.521 ր. 32 կ. գումարը, որը յատկացրած է Դպրոցի ապագայ նոր շինութեան համար, կազմւած է հետեւեալ կերպով՝*

| | |
|---|---|
| 1) Ծուրինեանց Յարութիւն, դեղատնատէր | 83 51 |
| 2) Դաւթեանց Գէորգ | 100 — |
| 3) Մուրադեանց Մելքիսեդէկ եպիսկ. | 160 — |
| 4) Թալիրեանց Աղէքսանդր | 50 — |
| 5) Սերեբրեկեան Գրիգոր | 330 — |
| 6) Ալիխանեանց Միքայէլի (դէյստւ. ստ. սօւետ.) ժառանգներից | 1.000 — |
| 7) Ջանջուղազեանց Ալեքսի Թիֆլ. քաղաք., ըստ կտակի | 1.500 — |
| 8) Տէր-Դաւթեանց Եղիսաբէթ, այրի աստիճանաւոր Գէորգի | 1.000 — |
| 9) Տէր-Աբրահամեանց Աւետիս, Թիֆլ. քաղ. | 300 — |
| 10) Ներսիսեան Դպրոցը իւր դրամական միջոցներից յատկացրել է այդ նպատակին | 12.997 81 |
| Գումարն է... | 17.521 32 |